Պարոն/Տիկին _____ *ին*
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա. Սաֆրյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա. Սաֆայրան _____

«20» 10 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**
   - Զարուհի Ստեփանյան,
   - Սիրանուշ Ղարախանյան,
   - Տիգրան Գևորգյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

- միջազգային համագործակցության բաժնի պետ,
- հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ,
- սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի գլխավոր մասնագետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Նիկոսիա, Կիպրոս, 2025 թվականի հոկտեմբերի 14-ը:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Եվրոպական միության արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցությունը կարգավորողների ցանց (EaPeReg) :

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Անցկացնել EaPeReg ցանցում գործող կարգավորող մարմինների անկախության և լայնաշերտի հարցերով և ռոումինգի հարցերով

աշխատանքային խմբերի համատեղ հանդիպումները՝ որպես աշխատանքային խմբերի նախագահող:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ 15-րդ REWG և 19-րդ IRB EWG համատեղ նիստին մասնակցել են Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի ազգային կարգավորող մարմինների ներկայացուցիչները, Խորվաթիայի, Լատվիայի, Լիտվայի, Լեհաստանի ներկայացուցիչները, ինչպես նաև EU4Digital նախաձեռնության և Համաշխարհային բանկի խմբի ներկայացուցիչները:

Նիստի ընթացքում խմբերի ղեկավարությունը ներկայացրեց 2024 թվականի հոկտեմբերի 15-ին Գերմանիայի Բոնն քաղաքում տեղի ունեցած REWG 14-րդ և 2025 թվականի ապրիլի 10-ին Մոլդովային Քիշնև քաղաքում տեղի ունեցած IRB EWG 19-րդ նիստից ի վեր կատարված աշխատանքների արդյունքները:

Ներկայացվեց տարածաշրջանային ռոումինգի համաձայնագրի (RRA) ներկայիս վիճակը: Հաշվի առնելով տարածաշրջանում ստեղծված իրավիճակը՝ 2023 թվականի ընթացքում խումբը որոշեց, որ RRA-ն ուժի մեջ կմտնի 2026 թվականի հունվարի 1-ին: Արևելյան գործընկերության երկրներում կկիրառվեն սիմետրիկ սակագներ, որոնք նման կլինեն ԵՄ սակագներին: Մշակվել է մեթոդաբանություն արդյունավետ մանրածախ միավորի գնի հաշվարկման համար, որը պետք է ավելացվի ԵՄ-ում կիրառվող մեծածախ գնին և որը կհամարվի Արևելյան գործընկերության երկրներում միջազգային ռոումինգի ծառայության հաճախորդի համար կիրառվող գինը: RRA-ի վերջին տարբերակը շրջանառվել է 2023 թվականի կեսերին (տարբերակ 38) և քննարկվել անդամ երկրների հետ: RRA-ի ստորագրումը հաստատել է նաև ուկրաինական կողմը՝ երկու պայմանով.

- RRA-ն ուժի մեջ կմտնի Ուկրաինայում ռազմական դրության վերացումից 6 ամիս անց,

- RRA-ի ստորագրումը որևէ հետևանքներ չի ունենա ԵՄ-ի և Ուկրաինայի միջև Roam Like at Home (RLAH) վերաբերյալ երկկողմ համաձայնագրի վրա: Կան տեղեկություններ, որ ԵՄ կողմից նամակը տրամադրվել է Ուկրաինայի ներկայացուցիչներին: Ցավոք, քննարկումների արդյունքների վերաբերյալ այլ տեղեկություններ չկան:

Զուգահեռաբար, EU4Digital թիմը խմբերի անդամներին տեղեկացրել է ԵՄ-ի և Մոլդովայի, ինչպես նաև ԵՄ-ի և Ուկրաինայի միջև երկկողմ ռոումինգի պայմանավորվածությունները արդեն իսկ կան: Մոլդովան կմիանա Միության մասշտաբով ձայնային վերջնավորման գների կարգավորմանը 2026 թվականի հունվարի 1-ից: Նշվեց նաև, որ կան ռոումինգի երկու առանձին տարածքներ՝ ԵՄ և Մոլդովայի և ԵՄ և

Ուկրաինայի, իսկ Մոլդովայի և Ուկրաինայի միջև կապը դեռևս բացակայում է այդ առումով լուծումը RRA-ն է:

Այսպիսով, նիստի ընթացքում Արևելյան գործընկերության յուրաքանչյուր երկրի ներկայացուցիչ կիսվել է RRA-ի վերաբերյալ առկա իրավիճակով.

Հայաստանի ներկայացուցիչները վերահաստատել են, որ ստորագրման վերաբերյալ քաղաքական որոշում է կայացվել, սպասում են ազգային խորհրդակցությունների մեկնարկի վերաբերյալ REWG-ի եզրակացությունը.

Ադրբեջանի ներկայացուցիչները երկկողմ քննարկումներ են ունեցել EU4Digital թիմի հետ և սպասում են REWG-ի կողմից հաջորդ քայլերի հաստատմանը.

Մոլդովայի ներկայացուցիչները հայտարարել են, որ անհրաժեշտ քայլերը ձեռնարկվել են, և սպասում են ազգային խորհրդակցությունների մեկնարկի վերաբերյալ REWG-ի եզրակացությունը.

Ուկրաինայի վերաբերյալ թարմացում չկա:

Ընդհանուր առմամբ, եզրակացվեց, որ RRA-ի ստորագրման գործընթացում հաջորդ քայլերը իրականացնելու համար անհրաժեշտ է Ուկրաինայի կողմից RRA-ի վերաբերյալ հաստատում ստանալ: Հետևաբար, REWG-ի ղեկավարությունը կկազմակերպի երկկողմ հանդիպում Ուկրաինայի ներկայացուցիչների հետ:

EU4Digital-ի փորձագետները ներկայացրին իրենց կողմից մշակված տարածաշրջանային լայնաշերտ ինտերնետի մոնիթորինգի զեկույցը: Զեկույցն ունի երկու մակարդակ՝ ազգային և տարածաշրջանային: Զեկույցի նպատակն է խթանել մրցունակ լայնաշերտ ծառայությունները Արևելյան գործընկերության երկրներում, EU4Digital-ի թիմը մշակել է տարածաշրջանային լայնաշերտ ինտերնետի հասանելիության մոնիթորինգի զեկույց՝ Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Մոլդովայում լայնաշերտ ինտերնետի հասանելիության վիճակի համապարփակ պատկերացում կազմելու նպատակով: Հիմք ընդունելով 2023 թվականի տարածաշրջանային զեկույցում սահմանված բազային տվյալները՝ այս զեկույցը ներկայացնում է 2024 թվականի թարմացված տվյալները և վերանայում է լայնաշերտ ինտերնետի մոնիթորինգի և ենթակառուցվածքների զարգացման ոլորտում երկրներին բնորոշ հիմնական զարգացումները: Զեկույցը ընդգծում է երկրների քանակական զարգացումները՝ հիմնվելով IRB EWG հետ սերտ համագործակցությամբ հավաքված տվյալների վրա:

Զեկույցը բաղկացած է տվյալների հավաքագրման մեթոդաբանությունից, երկրին հատուկ լայնաշերտ հասանելիության մոնիթորինգի պրոֆիլներից և Արևելյան

գործընկերության երկրների և ԵՄ-ի միջև լայնաշերտ հասանելիության վիճակի վերաբերյալ տարածաշրջանային համեմատությունից:

Որոշվեց, որ մինչև նոյեմբերի 1-ը ԱԼԳ երկրների և EU4Digital թիմի կողմից կկատարվեն զեկույցի վերջնական ճշգրտումներ և կհամաձայնեցվի վերջնական տարբերակը:

Այնուհետև ներկայացվեց լայնաշերտ հասանելիության շուկայի վերլուծության զեկույցը: Վերլուծությունն իրականացվում է Հայաստանի և Ադրբեջանի համար, Մոլդովայի և Ուկրաինայի ազգային կարգավորող մարմինները իրենց կողմից իրականացրած վերլուծությունը տրամադրել են EU4Digital թիմին, և դրանք նույնպես ներառված են զեկույցում: Վրաստանը նույնպես տրամադրել է իր զեկույցը: EU4Digital թիմը ակնկալում է Հայաստանի և Ադրբեջանի կողմից զեկույցի վավերացմանը՝ համաձայնեցնելով շահագրգիռ կողմերի հետ:

Վերջապես համաձայնեցված արդյունքները կներառվեն զեկույցում:

REWG շրջանակներում խմբի անդամները աշխատել են նաև ձայնային զանգերի վերջնավորման շուկայի վերլուծության զեկույցի մշակման վրա, որի նպատակն է կազմել համապարփակ փաստաթուղթ Արևելյան գործընկեր երկրների համար՝ ձայնային զանգերի վերջնավորման շուկայի վերլուծություն իրականացնելու համար:

Վերլուծությունը մշակվում է Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի համար, Մոլդովան արդեն իսկ իրականացրել է շուկայի վերլուծությունը և համապատասխան տվյալներ է տրամադրել փորձագիտական թիմին: EU4Digital թիմը ներկայացրեց Արևելյան գործընկերության բջջային և ֆիքսված շուկաների, համապատասխան շուկայական մասնաբաժինների, SMP-ի որոշման, պարտադրված պարտավորությունների և այլնի վերլուծության նախնական արդյունքները:

EU4Digital թիմը ներկայացրեց նաև տեղեկատվություն աշխատաժողովի մասին, որը տեղի կունենա EaPeReg լիագումար նիստի հետ միաժամանակ Ռիգայում 2026 թվականի նոյեմբերի 11-12-ը:

Հաշվի առնելով, որ REWG-ի և IRB EWG-ի ղեկավարությունն այժմ ղեկավարվում է հանձնաժողովի ներկայացուցչի կողմից, խմբերի աշխատանքի շրջանակները որոշ առումներով համընկնում են, և որ RRA-ի հարցը ներկայումս կասեցված է (սպասում ենք UA-ի հետ քննարկման ավարտին), առաջարկվեց վերապրոֆիլավորել REWG աշխատանքների շրջանակը կամ դիտարկել երկու խմբերին միավորելու հնարավորությունը:

Հնարավորությունները կքննարկվեն երկու խմբերի անդամների հետ նոյեմբերին կայանալիք EaPeReg լիագումար նիստից առաջ:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Հանդիպման արդյունքներից ելնելով՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համատեղ աշխատանքները Ուկրաինայի ներկայացուցիչների հետ՝ իրենց կողմից առաջադրված առաջարկությունների քննարկման նպատակով:

Որոշվեց, որ մինչև նոյեմբերի 1-ը ԱլԳ երկրների և EU4Digital թիմի կողմից կկատարվեն զեկույցի վերջնական ճշգրտումներ և կհամաձայնեցվի վերջնական տարբերակը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն նախատեսվում է՝ որպես EaPeReg ցանցում գործող ռոումինգի և կարգավորողների անկախության և լայնաշերտի հարցերով աշխատանքային խմբերի նախագահող, շարունակել աշխատանքները և համագործակցությունը EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ՝ խմբերի բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով, ինչպես նաև քննարկել աշխատանքային խմբի անդամների հետ հետագա գործունեությունը:

Հաշվի առնելով հանդիպման ժամանակ քննարկված ժամկետները՝ առաջարկում ենք երկկողմ ձևաչափով շարունակել քննարկումները EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ՝ զեկույցների վերջնական հաստատման նպատակով :

Գործուղվող ---------- 17.10.2025թ. ---------- ***Զ. Ստեփանյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 17.10.2025թ. ---------- ***Ս. Ղարախանյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 20.10.2025թ. ---------- ***Տ. Գևորգյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Պարոն/Տիկին _____ *ին*
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա. Սաֆրյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա. Սաֆայրան _____

«20» 10 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**
   - Զարուհի Ստեփանյան,
   - Սիրանուշ Ղարախանյան,
   - Տիգրան Գևորգյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

- միջազգային համագործակցության բաժնի պետ,
- հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ,
- սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի գլխավոր մասնագետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Նիկոսիա, Կիպրոս, 2025 թվականի հոկտեմբերի 14-ը:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Եվրոպական միության արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցությունը կարգավորողների ցանց (EaPeReg) :

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Անցկացնել EaPeReg ցանցում գործող կարգավորող մարմինների անկախության և լայնաշերտի հարցերով և ռոումինգի հարցերով

աշխատանքային խմբերի համատեղ հանդիպումները՝ որպես աշխատանքային խմբերի նախագահող:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ 15-րդ REWG և 19-րդ IRB EWG համատեղ նիստին մասնակցել են Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի ազգային կարգավորող մարմինների ներկայացուցիչները, Խորվաթիայի, Լատվիայի, Լիտվայի, Լեհաստանի ներկայացուցիչները, ինչպես նաև EU4Digital նախաձեռնության և Համաշխարհային բանկի խմբի ներկայացուցիչները:

Նիստի ընթացքում խմբերի ղեկավարությունը ներկայացրեց 2024 թվականի հոկտեմբերի 15-ին Գերմանիայի Բոնն քաղաքում տեղի ունեցած REWG 14-րդ և 2025 թվականի ապրիլի 10-ին Մոլդովային Քիշնև քաղաքում տեղի ունեցած IRB EWG 19-րդ նիստից ի վեր կատարված աշխատանքների արդյունքները:

Ներկայացվեց տարածաշրջանային ռոումինգի համաձայնագրի (RRA) ներկայիս վիճակը: Հաշվի առնելով տարածաշրջանում ստեղծված իրավիճակը՝ 2023 թվականի ընթացքում խումբը որոշեց, որ RRA-ն ուժի մեջ կմտնի 2026 թվականի հունվարի 1-ին: Արևելյան գործընկերության երկրներում կկիրառվեն սիմետրիկ սակագներ, որոնք նման կլինեն ԵՄ սակագներին: Մշակվել է մեթոդաբանություն արդյունավետ մանրածախ միավորի գնի հաշվարկման համար, որը պետք է ավելացվի ԵՄ-ում կիրառվող մեծածախ գնին և որը կհամարվի Արևելյան գործընկերության երկրներում միջազգային ռոումինգի ծառայության հաճախորդի համար կիրառվող գինը: RRA-ի վերջին տարբերակը շրջանառվել է 2023 թվականի կեսերին (տարբերակ 38) և քննարկվել անդամ երկրների հետ: RRA-ի ստորագրումը հաստատել է նաև ուկրաինական կողմը՝ երկու պայմանով.

- RRA-ն ուժի մեջ կմտնի Ուկրաինայում ռազմական դրության վերացումից 6 ամիս անց,

- RRA-ի ստորագրումը որևէ հետևանքներ չի ունենա ԵՄ-ի և Ուկրաինայի միջև Roam Like at Home (RLAH) վերաբերյալ երկկողմ համաձայնագրի վրա: Կան տեղեկություններ, որ ԵՄ կողմից նամակը տրամադրվել է Ուկրաինայի ներկայացուցիչներին: Ցավոք, քննարկումների արդյունքների վերաբերյալ այլ տեղեկություններ չկան:

Զուգահեռաբար, EU4Digital թիմը խմբերի անդամներին տեղեկացրել է ԵՄ-ի և Մոլդովայի, ինչպես նաև ԵՄ-ի և Ուկրաինայի միջև երկկողմ ռոումինգի պայմանավորվածությունները արդեն իսկ կան: Մոլդովան կմիանա Միության մասշտաբով ձայնային վերջնավորման գների կարգավորմանը 2026 թվականի հունվարի 1-ից: Նշվեց նաև, որ կան ռոումինգի երկու առանձին տարածքներ՝ ԵՄ և Մոլդովայի և ԵՄ և

Ուկրաինայի, իսկ Մոլդովայի և Ուկրաինայի միջև կապը դեռևս բացակայում է այդ առումով լուծումը RRA-ն է:

Այսպիսով, նիստի ընթացքում Արևելյան գործընկերության յուրաքանչյուր երկրի ներկայացուցիչ կիսվել է RRA-ի վերաբերյալ առկա իրավիճակով.

Հայաստանի ներկայացուցիչները վերահաստատել են, որ ստորագրման վերաբերյալ քաղաքական որոշում է կայացվել, սպասում են ազգային խորհրդակցությունների մեկնարկի վերաբերյալ REWG-ի եզրակացությունը.

Ադրբեջանի ներկայացուցիչները երկկողմ քննարկումներ են ունեցել EU4Digital թիմի հետ և սպասում են REWG-ի կողմից հաջորդ քայլերի հաստատմանը.

Մոլդովայի ներկայացուցիչները հայտարարել են, որ անհրաժեշտ քայլերը ձեռնարկվել են, և սպասում են ազգային խորհրդակցությունների մեկնարկի վերաբերյալ REWG-ի եզրակացությունը.

Ուկրաինայի վերաբերյալ թարմացում չկա:

Ընդհանուր առմամբ, եզրակացվեց, որ RRA-ի ստորագրման գործընթացում հաջորդ քայլերը իրականացնելու համար անհրաժեշտ է Ուկրաինայի կողմից RRA-ի վերաբերյալ հաստատում ստանալ: Հետևաբար, REWG-ի ղեկավարությունը կկազմակերպի երկկողմ հանդիպում Ուկրաինայի ներկայացուցիչների հետ:

EU4Digital-ի փորձագետները ներկայացրին իրենց կողմից մշակված տարածաշրջանային լայնաշերտ ինտերնետի մոնիթորինգի զեկույցը: Զեկույցն ունի երկու մակարդակ՝ ազգային և տարածաշրջանային: Զեկույցի նպատակն է խթանել մրցունակ լայնաշերտ ծառայությունները Արևելյան գործընկերության երկրներում, EU4Digital-ի թիմը մշակել է տարածաշրջանային լայնաշերտ ինտերնետի հասանելիության մոնիթորինգի զեկույց՝ Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Մոլդովայում լայնաշերտ ինտերնետի հասանելիության վիճակի համապարփակ պատկերացում կազմելու նպատակով: Հիմք ընդունելով 2023 թվականի տարածաշրջանային զեկույցում սահմանված բազային տվյալները՝ այս զեկույցը ներկայացնում է 2024 թվականի թարմացված տվյալները և վերանայում է լայնաշերտ ինտերնետի մոնիթորինգի և ենթակառուցվածքների զարգացման ոլորտում երկրներին բնորոշ հիմնական զարգացումները: Զեկույցը ընդգծում է երկրների քանակական զարգացումները՝ հիմնվելով IRB EWG հետ սերտ համագործակցությամբ հավաքված տվյալների վրա:

Զեկույցը բաղկացած է տվյալների հավաքագրման մեթոդաբանությունից, երկրին հատուկ լայնաշերտ հասանելիության մոնիթորինգի պրոֆիլներից և Արևելյան

գործընկերության երկրների և ԵՄ-ի միջև լայնաշերտ հասանելիության վիճակի վերաբերյալ տարածաշրջանային համեմատությունից:

Որոշվեց, որ մինչև նոյեմբերի 1-ը ԱԼԳ երկրների և EU4Digital թիմի կողմից կկատարվեն զեկույցի վերջնական ճշգրտումներ և կհամաձայնեցվի վերջնական տարբերակը:

Այնուհետև ներկայացվեց լայնաշերտ հասանելիության շուկայի վերլուծության զեկույցը: Վերլուծությունն իրականացվում է Հայաստանի և Ադրբեջանի համար, Մոլդովայի և Ուկրաինայի ազգային կարգավորող մարմինները իրենց կողմից իրականացրած վերլուծությունը տրամադրել են EU4Digital թիմին, և դրանք նույնպես ներառված են զեկույցում: Վրաստանը նույնպես տրամադրել է իր զեկույցը: EU4Digital թիմը ակնկալում է Հայաստանի և Ադրբեջանի կողմից զեկույցի վավերացմանը՝ համաձայնեցնելով շահագրգիռ կողմերի հետ:

Վերջապես համաձայնեցված արդյունքները կներառվեն զեկույցում:

REWG շրջանակներում խմբի անդամները աշխատել են նաև ձայնային զանգերի վերջնավորման շուկայի վերլուծության զեկույցի մշակման վրա, որի նպատակն է կազմել համապարփակ փաստաթուղթ Արևելյան գործընկեր երկրների համար՝ ձայնային զանգերի վերջնավորման շուկայի վերլուծություն իրականացնելու համար:

Վերլուծությունը մշակվում է Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի համար, Մոլդովան արդեն իսկ իրականացրել է շուկայի վերլուծությունը և համապատասխան տվյալներ է տրամադրել փորձագիտական թիմին: EU4Digital թիմը ներկայացրեց Արևելյան գործընկերության բջջային և ֆիքսված շուկաների, համապատասխան շուկայական մասնաբաժինների, SMP-ի որոշման, պարտադրված պարտավորությունների և այլնի վերլուծության նախնական արդյունքները:

EU4Digital թիմը ներկայացրեց նաև տեղեկատվություն աշխատաժողովի մասին, որը տեղի կունենա EaPeReg լիագումար նիստի հետ միաժամանակ Ռիգայում 2026 թվականի նոյեմբերի 11-12-ը:

Հաշվի առնելով, որ REWG-ի և IRB EWG-ի ղեկավարությունն այժմ ղեկավարվում է հանձնաժողովի ներկայացուցչի կողմից, խմբերի աշխատանքի շրջանակները որոշ առումներով համընկնում են, և որ RRA-ի հարցը ներկայումս կասեցված է (սպասում ենք UA-ի հետ քննարկման ավարտին), առաջարկվեց վերապրոֆիլավորել REWG աշխատանքների շրջանակը կամ դիտարկել երկու խմբերին միավորելու հնարավորությունը:

Հնարավորությունները կքննարկվեն երկու խմբերի անդամների հետ նոյեմբերին կայանալիք EaPeReg լիագումար նիստից առաջ:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Հանդիպման արդյունքներից ելնելով՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համատեղ աշխատանքները Ուկրաինայի ներկայացուցիչների հետ՝ իրենց կողմից առաջադրված առաջարկությունների քննարկման նպատակով:

Որոշվեց, որ մինչև նոյեմբերի 1-ը ԱլԳ երկրների և EU4Digital թիմի կողմից կկատարվեն զեկույցի վերջնական ճշգրտումներ և կհամաձայնեցվի վերջնական տարբերակը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն նախատեսվում է՝ որպես EaPeReg ցանցում գործող ռոումինգի և կարգավորողների անկախության և լայնաշերտի հարցերով աշխատանքային խմբերի նախագահող, շարունակել աշխատանքները և համագործակցությունը EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ՝ խմբերի բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով, ինչպես նաև քննարկել աշխատանքային խմբի անդամների հետ հետագա գործունեությունը:

Հաշվի առնելով հանդիպման ժամանակ քննարկված ժամկետները՝ առաջարկում ենք երկկողմ ձևաչափով շարունակել քննարկումները EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ՝ զեկույցների վերջնական հաստատման նպատակով :

Գործուղվող ---------- 17.10.2025թ. ---------- ***Զ. Ստեփանյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 17.10.2025թ. ---------- ***Ս. Ղարախանյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 20.10.2025թ. ---------- ***Տ. Գևորգյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)